Մատակարար	«Էմպատիա» ՍՊԸ	
Իրավ. հասցե	Ք, Ստեփանակերտ, փ, Կամո II նրբ, 3/44	
Գործ. հասցե	Ք, Ստեփանակերտ, փ, Հեքիմյան 7ա	Հաշիվ N 032
Հ/Հ	11500-420342403	
Բանկ	Հայբիզնեսբանկ ՓԲԸ	օր "06" նոյեմբերի 2018թ.
ՀՎՀՀ	90037236	
Վճարող	ՀՀ քննչական կոմիտե	Պայմանագիր/պատվեր
Հասցե	ՀՀ,ք.Երևան,Մամիկոնյան 46/5	N
Հ/Հ	90001-1000834	
Բանկ	Երևանի թիվ 1 ՏԳԲ	օր
ՀՎՀՀ	02631263	

Լրացում՝ Փոխանցումով

NN	Անվանումը	Քանակը	Միավ.	Գինը	Գումարը
1	Մատուցված փորձաքննության դիմաց	1		15,166.67	15,166.67

Ընդամենը՝	15,166.67
20.00% ԱԱՀ՝	3,033.33
Վճարման գումարը՝	18,200.00

Գումարը բառերով՝ *Տասնութ հազար երկու հարյուր ՀՀ դրամ*

Կ. Տ.	Կ. Տ.
«Էմպատիա» ՍՊԸ	ՀՀ քննչական կոմիտե
Տնօրեն Ա. Լալայան	Տնօրեն
Գլխավոր հաշվապահ Ն.Բարսեղյան	Գլխավոր հաշվապահ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դատահոգեբուժական-դատահոգեբանական ամբուլատոր փորձաքննություն նշանակելու մասին

«14» սեպտեմբերի 2018թ. ք.Հադրութ

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Վ.Նավասարդյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 91252318 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՊԲ 59703 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 3-րդ վաշտի 1-ին դասակի դիպուկահար, ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Վալերիկի Առաքելյանը, 2018 թվականի մայիսի 19-ին, ժամը 16:30-ի սահմաններում, նշանակված լինելով մարտական հերթապահության զորամասի պահպանության տեղամասի թիվ 134 մարտական դիրքում որպես դիտորդ, առաջնագծի դիտորդի պարտականությունները իրականացնելիս, դիտակետի մոտ, իրեն ամրակցված ԴԴՀ տեսակի 76601 համարի հրացանով կրակոց է արձակել իր կրծքավանդակին՝ ինքն իր առողջությանը պատճառելով կրծքավանդակի ձախ կեսի հրազենային գնդակային միջանցիկ վիրավորում և տեղափոխվել է Մեխակավանի զինհոսպիտալ, ինչը հանգեցրել է զինվորական ծառայությունը ժամանակավորապես դադարեցնելուն:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնում 19.05.2018թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 91252317 քրեական գործը: Գործով որոշում է կայացվել Ն.Առաքելյանի վերաբերյալ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին:

Նախաքննությամբ պարզվել է, որ շարքային Ն.Առաքելյանը ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես սահմանափակ շփվող անձնավորություն, համածառայողների շրջանում հաճախ բողոքել է ծառայությունից և դժվարությամբ է հարմարվել մարտական հերթապահության գրաֆիկին:

2018 թվականի մայիսի 07-ին Ն.Առաքելյանը նշանակվել է մարտական հերթապահության թիվ 134 մարտական դիրքում որպես դիտորդ, որպես դիրքի ավագ է նշանակվել սերժանտ Հովհաննես Մուրադյանը, իսկ որպես հենակետի պատասխանատու՝ նույն դասակի հրամանատար, լեյտենանտ Ոսկան Մուրադյանը, ով գտնվել է թիվ 134 մարտական դիրքում և միաժամանակ հանդիսացել է դիրքի ավագի փոխարինող: Մարտական հերթապահությունը իրականացրել են 3 հերթափոխով և Ն.Առաքելյանի հետ նույն հերթափոխի դիտորդ է եղել շարքային Գրիգոր Մավյանը:

Մայիսի 19-ին, առավոտյան ժամը 01:00-ի սահմաններում շարքային Ն.Առաքելյանը, հանդիսանալով արթուն հերթափոխ, արթնացրել է առաջնագծի դիտորդի հերթափոխը ընդունող շարքային Կարեն Թադևոսյանին, բայց քանի որ վերջինս դժվարությամբ էր արթնանում՝ քաշել է նրա ոտքից, ինչից զայրանալով շարքային Կ.Թադևոսյանը ձեռքով մեկ անգամ հարվածել է Ն.Առաքելյանի պարանոցին և հայհոյել նրան, իսկ Ն.Առաքելյանը պատասխան հայհոյել է վերջինիս: Հենակետի պատասխանատու լեյտենանտ Ռ.Մելքոնյանը հանդարտեցրել է նրանց և դրանով միջադեպը ավարտվել է:

Մայիսի 19-ին, ժամը 05:00-ից 07:00-ն, պայմանավորվածությանը համաձայն Ն.Առաքելյանը պետք է իրականացներ առույգ ու արթուն հերթափոխի պարտականությունները: Ժամը 06:30-ի սահմաններում դիրքի անձնակազմից Ն.Միրզախանյանը նկատել է, որ Ն.Առաքելյանը քնել է կացարանում, կանչել է նրան, ինչին Ն.Առաքելյանը պատասխանել է, որ քնած չէ: Ն.Առաքելյանին քնած տեսնելու մասին Ն.Միրզախանյանը պատմել է Ա.Կալեյանին, ով իր հերթին այդ մասին հայտնել է Գ.Մավյանին: Ժամը 15:00-ի սահմաններում, շարքայիններ Ն.Առաքելյանը և Գ.Մավյանը ստանձնել են առաջնագծի դիտորդի պարտականությունները, որի ընթացքում Գ.Մավյանը հարցրել է Ն.Առաքելյանին, թե ինչու է քնել, սակայն վերջինս չի ընդունել, որ քնած է եղել, ինչին շարքային Գ.Մավյանը պատասխանել է, որ հերթափոխը հանձնելուց հետո «կճշտեն, թե ով է սուտ ասում» ու դրանով խոսակցությունը ավարտվել է:

16.06.2018թ-ին Նարեկ Վալերիկի Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի 4-րդ մասով և նույն օրը վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին:

Մեղադրյալ Ն.Առաքելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքից դեռևս երկու ամիս առաջ, երբ նույն կազմով մարտական հերթապահության են նշանակված եղել նույն՝ թիվ 134 մարտական դիրքում, գիշերային ժամին ինքը կարգված է եղել, որպես առույգ հերթափոխ և իր պարտականությունները իրականացնելիս գնացել է կացարանի մյուս կողմում առկա վտանգավոր տեղանքը դիտարկելու: Նույն պահին առաջնագծից դեպի կացարան են վերադարձել շարքայիններ Արմենակ Կալեյանն ու Նարեկ Միրզախանյանը և Ա.Կալեյանը մոտենալով իրեն հանդիմանել է նշանաբառը չհարցնելու համար, ինչին պատասխանել է, որ գնացել էր դիտարկում իրականացնելու: Առաջացած լեզվակռվի ընթացքում Ա.Կալեյանը և Ն.Առաքելյանն սկսել են միմյանց քաշքշել, իսկ Ն.Միրզախանյանը բաժանել է նրանց: Բաժանելու ընթացքում Ա.Կալեյանը հայհոյել է Ն.Առաքելյանին՝ փողոցային խոսակցականով անվանելով «սրբապիղծ» (չա....խ): Աղմուկի ձայների վրա առաջնագծից եկել է դիրքի ավագ Հ.Մուրադյանը, բաժանել նրանց և խրատական բնույթի խոսակցությունով հորդորել վերջացնել վիճաբանությունը, ինչով միջադեպը ավարտվել է: Հաջորդ օրը Ն.Առաքելյանը իրեն նման կերպով վիրավորելու մասին պատմել է համածառայողներ Հովհաննես Ասատրյանին և Գրիգոր Մավյանին: Հ.Ասատրյանը այդ թեմայով առանձնազրույց է ունեցել Ա.Կալեյանի հետ, որից հետո Ա.Կալեյանը ներողություն է խնդրել Ն.Առաքելյանից:

Չնայած այդ ամենին, մեղադրյալ Ն.Առաքելյանը ցուցմունքում նշել է, որ այդ վիրավորանքը շատ ցավագին է ընդունել, հետագա ծառայության ընթացքում անընդհատ իրեն մտորումների մեջ է գցել և համարում է, որ դրանից հետո Ա.Կալեյանը իրեն «կոտրել» է: Տվյալ օրվանից լարված փոխհարաբերությունների է ունեցել շարքային Ա.Կալեյանի հետ:

Մեկ այլ օր մարտական հերթապահության ընթացքում Ա.Կալեյանը արթնացրել է Ն.Առաքելյանին, սակայն վերջինս դժվարությամբ է արթնացել, ինչի պատճառով Ա.Կալեյանը ասել է, որ նրա համար միևնույն է Ն.Առաքելյանը կարթնանա, թե՝ ոչ, միաժամանակ հայհոյելով նրան: Վերջինս լսել է հայհոյանքը, սակայն որևէ կերպ չի արձագանքել:

Բացի այդ, 2018 թվականի մայիսի 17-ին մարտական հերթապահության ընթացքում, երբ Ն.Առաքելյանը և Գ.Մավյանը առաջնագծում իրականացրել են դիտորդի պարտականությունները, այնտեղ է եկել շարքային Ա.Կալեյանը և հարցրել

Ն.Առաքելյանին, թե արդյոք վերջինս սեղանը մաքրելիս վերցրել է դրա վրա առկա էլեկտրական հաղորդիչը, ինչին վերջինս պատասխանել է, որ չի վերցրել: Ա.Կալեյանը նորից է հարցը կրկնել, ինչին Ն.Առաքելյանը տվել է նույն պատասխանը: Առաջացած լեզվակռիվը վերածվել է քաշքշուկի, սակայն Գ.Մավյանը բաժանել է նրանց: Խոսակցության ընթացքում Ն.Առաքելյանը ասել է «այնպես մի արա հետդ մի բան անեմ», ինչին Ա.Կալեյանը հայհոյանքով պատասխանել է, որ այդպիսի անձնավորություն չկա, ում պատճառով ինքը «տուն չհասնի» և դրանով միջադեպը ավարտվել է ու Ա.Կալեյանը վերադարձել է կացարան:

Մեղադրյալ Ն.Առաքելյանը իր ցուցմունքում նշել է, որ Ա.Կալեյանի հետ առաջին միջադեպից հետո ներքուստ ապրումներ է ունեցել և վերջինիս հետ ցանկացած առնչությունին նյարդայնացել է, ընդհուպ նույնիսկ այն դեպքերում, երբ Ա.Կալեյանը պարզապես կանչել է իր անունը կամ դիպչել է իրեն: Այդ ժամանակից ի վեր մտքեր է ունեցել կյանքին վերջ տալու մասին, քանի որ իրեն զգում էր վիրավորված և կարծում էր, որ Ա.Կալեյանը մտածում է, որ «կոտրել» է իրեն, ինչի պայմաններում կարծում էր, որ չի կարողանալու նայել «իր ընկերների և հարազատների աչքերին»:

2018 թվականի մայիսի 19-ին ժամը 15:00-ին ստանձնելով առաջանագծում դիտորդի պարտականությունները, դարձյալ մտքեր է ունեցել ինքնասպանություն գործելու վերաբերյալ: Ժամը 16:30-ի սահմաններում, երբ Գ.Մավյանը գտնվում էր դիտակետում, իսկ ինքը դրա դիմաց, ինքնասպանություն գործելու մտքերով քայլել է դեպի թիվ 11 խրամաբջիջը և որոշել ինքնասպանություն գործել: Քանի որ իրեն ամրակցված ԴԴՀ տեսակի 76601 համարի հրացանի երկարությունը հնարավորություն չէր թողնում ձեռքով սեղմել ձգանը՝ գտնից վերցրել է մետակյա ձողի կտոր և այն հարմարեցրել ձգանին այնպես, որ կարողանա ոտքով սեղմել այն: Դրանից հետո բացել է հրացանի ապահովիչը, լիցքավորել այն, հրացանի կոթը դրել գետնին, իսկ փողը հարմարեցրել սրտի հատվածում, այնպես, որ այն հպվի զրահաբաճկոնի կտորի մասին, ապա արագ ոտքով սեղմել է մետաղյալ ձողը, ինչի արդյունքում հրացանը կրակել է: Նշում է, որ այդ գործողությունները շատ արագ է կատարել, որպեսզի հանկարծ չփոշմանի, սակայն կրակոցի արդյունքում հետ-հետ է գնացել, ընկել հողաթմբին և հասկանալով, որ կենդանի է մնացել, փոշմանել է իր արարքի համար ու անմիջապես գնացել դեպի դիտակետ, որտեղ իրեն ընդառաջ է եկել շարքային Գ.Մավյանը: Վերջինիս ասել է, որ ինքն է կրակել իր վրա:

Ն.Առաքելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ շատ լավ է վերաբերում բանակում զինվորական ծառայությանը, չնայած դժվարությամբ է հարմարվել մարտական հերթապահության գրաֆիկին և ծառայողական կյանքին: Չի խուսափում զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց և նույնիսկ ցանկացել է մասնակցել «Ես եմ» ծրագրին, իսկ ինքն իրեն հրազենային վիրավորում է պատճառել ինքնասպանություն գործելու նպատակով: Համածառայողների հետ որևէ այլ խնդիրներ չի ունեցել, բոլորի հետ գտնվել է լավ կանոնադրային փոխահարաբերությունների մեջ, միայն լարված փոխհարաբերություններ է ունեցել շարքային Ա.Կալեյանի հետ:

Նախաքննության ընթացքում շարքային Ն.Առաքելյանի մայրը՝ Բ.Առաքելյանը, ցուցմունք է տվել այն մասին, որ որդին երբեք չի բողոքել զինվորական ծառայությունից և միշտ ասել է, որ խնդիրներ չունի: 2008 թվականից Ն.Առաքելյանի ծնողները ամուսնալուծվել են և այդ ժամանակից ի վեր վերջինս ապրում է մոր հետ՝ ԱՀ Մարտունու շրջանի Սպիտակաշեն գյուղում: Բ.Առաքելյանը նաև նշել է, որ Ն.Առաքելյանի հայրը՝

Վալերկ Առաքելյանը, ունի հոգեկան խնդիրներ, իսկ Ն.Առաքելյանը մանկուց եղել է շուտ նյարդայնացող երեխա:

Նախաքննության ընթացքում վկաներ Գ.Մավյանը և Ն.Միրզախանյանը ցուցմունք են տվել այն մասին, Ա.Կալեյանը կոնկրետ Ն.Առաքելյանին չի հայհոյել, այլ հայհոյանքը հնչեցրել է ընդհանուր: Վերջիններս իրենց ցուցմունքները պնդել են նաև մեղադրյալ Ն.Առաքելյանի հետ առերես հարցաքննության ընթացքում:

10.07.2018թ-ին թիվ 91252318 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 360 հոդվածի 1-ին մասով և 360 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ **91253518** քրեական գործը և նույն օրը որոշում է կայացվել թիվ 91253518 քրեական գործը թիվ 91252318 քրեական գործին միացնելու և նախաքննությունը մեկ վարույթում՝ թիվ 91252318 համարով շարունակելու մասին:

10.07.2018թ-ին որոշում է կայացվել Արմենակ Արգամի Կալեյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ և վերջինս որպես կասկածյալ ցուցմունքում ընդունել է վերոնշյալ հանգամանքները, այդ թվում ընդունել է արթնացնելիս Ն.Առաքելյանին հայհոյելը, սակայն նշել է, որ դեպքից երկու ամիս առաջ նշանաբառը չհարցնելու պատճառով առաջացած լեզվակռվի ընթացքում Ն.Առաքելյանին «սրբապիղծ» չի անվանել, այլ այդ հայհոյանքը հնչեցրել է ընդհանուր՝ ասելով «երբ եմ այս «սրբախիղծ» տեղից պրծնելու»:

Իրականացվել է մեղադրյալ Ն.Առաքելյանի և կասկածյալ Ա.Կալեյանի առերես հարցաքննություն, որի ընթացքում վերջիններիցս յուրաքանչյուրը պնդել է իր ցուցմունքը:

Նույն օրը Ա.Կալեյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360 հոդվածի 1-ին մասով և 360 հոդվածի 1-ին մասով: Մեղադրյալ Ա.Կալեյանը Ն.Առաքելյանին «սրբապիղծ» անվանելու համար առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, իսկ արթնացնելիս վերջինիս հայհոյելու համար իրեն մեղավոր է ճանաչել:

Միաժամանակ համածառայողները իրենց ցուցմունքներում նշել են, որ Ն.Առաքելյանը և Ա.Կալեյանը միմյանց հետ գտնվել են լարված փոխհարաբերություններում, ինչպես նաև «չեն սիրել» միմյանց:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 1409/հ եզրակացության՝ Նարեկ Առաքելյանի մարմնական վնասվածքները՝ կրծքավանդակի ձախ կեսի հրազենային գնդակային միջանցիկ թափանցող վիրավորման ձևով, որը իր ընթացքով միջանցիկ կերպով վնասել է ձախ թոքը առաջ բերելով ձախակողմյան հեմոպնևմոթորաքսի՝ հետևանք է գնդակով լիցքավորված հրազենից արձակված կրակոցի ներգործության, հնարավոր է նշված ժամկետին, որը պատճառել է առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Համաձայն կատարված հարցմանը ի պատասխան ԱՀ «Հոգեթմրաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ից ստացված գրության՝ Նարեկ Վալերիկի Առաքելյանի հայրը՝ Վալերիկ Առաքելյանը ԱՀ «Հոգեթմրաբանական դիսպանսերում» հաշվառման մեջ է գտնվում 27.04.2004թ-ից՝ «Հոգեկան և վարքային խանգարումներ ալկոհոլի գործածման հետևանքով» ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքները պարզաբանելու համար անհրաժեշտ են դատահոգեբուժության և դատահոգեբանական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքիի 55, 243 եւ 244 հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 91252318 քրեական գործով նշանակել համալիր դատահոգեբանական-դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ԱՀ ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի փորձագետներին:

2. Փորձագետի պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը.

1) Նարեկ Վալերիկի Առաքելյանը տառապել կամ տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, թե՝ ոչ, եթե այո, ապա երբվանից և ինչպիսի հիվանդությամբ: Եթե Ն.Վ.Առաքելյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, ապա ինչի հետևանքով է այն առաջացել կամ ինչպես է արտահայտվել:

2) Ինչպիսի անձնային առանձնահատկություններ, հուզական և մոտիվացիոն ոլորտի առանձնահատկություններ ունի շարքային Ն.Վ.Առաքելյանը:

3) Նարեկ Վալերիկի Առաքելյանը իրեն մեղսագրվող և սույն որոշման մեջ նկարագրված արարքը կատարելու պահին գիտակցել է արդյոք իր գործողությունների բնույթն ու հասարակական վտանգավորությունը, թե՝ ոչ, կարողացել է ղեկավարել դրանք, թե՝ ոչ: Արարքը կատարելու պահին Ն.Վ.Առաքելյանը արդյոք եղել է մեղսունակ:

4) Նարեկ Վալերիկի Առաքելյանը ունակ է արդյոք ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները, թե՝ ոչ:

5) Ն.Վ.Առաքելյանի մոտ առկա անձնային հատկանիշներով, նա ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի ընդունակ էր, թե՝ ոչ:

6) Ն.Վ.Առաքելյանի կողմից ինքն իրեն հրազենային վիրավորում հասցնելու և նույն մարտական դիրքի անձնակազմից պարտադիր ժամկետային զինծառայող շարքային Ա.Ա.Կալեյանի դրսևորած վարքագծի միջև պատճառական կապ կա, թե՝ ոչ:

7) Ն.Վ.Առաքելյանի անձնային հատկանիշների և օբյեկտիվ առկա հանգամանքների ամբողջության հետ միաժամանակ Ա.Ա.Կալեյանի դրսևորած վարքագիծը՝ հասցրած վիրավորանքները, կարող էին հասցնել Ն.Վ.Առաքելյանին ինքնասպանության փորձի, թե՝ ոչ:

3. Փորձագետին տրամադրել թիվ 91252318 քրեական գործի նյութերը, Ն.Վ.Առաքելյանի զորակոչի անձնական գործը:

4. Փորձագետ(ներ)ին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև նշված չեն սույն որոշման մեջ, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, մտնում են փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար:

5. Փորձագետ(ներ)ին պարզաբանել ՀՀ քր դատ. օր.-ի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր.-ի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երկրորդ կայազորային
քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Վ.Նավասարդյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
փորձագետ ճանաչելու մասին

«23» հոկտեմբերի 2018թ. ք.Հադրութ

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Վ.Նավասարդյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 91252318 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՊԲ 59703 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 3-րդ վաշտի 1-ին դասակի դիպուկահար, ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Վալերիկի Առաքելյանը, 2018 թվականի մայիսի 19-ին, ժամը 16:30-ի սահմաններում, նշանակված լինելով մարտական հերթապահության զորամասի պահպանության տեղամասի թիվ 134 մարտական դիրքում որպես դիտորդ, առաջնագծի դիտորդի պարտականությունները իրականացնելիս, դիտակետի մոտ, իրեն ամրակցված ԴԴՀ տեսակի 76601 համարի հրացանով կրակոց է արձակել իր կրծքավանդակին՝ ինքն իր առողջությանը պատճառելով կրծքավանդակի ձախ կեսի հրազենային գնդակային միջանցիկ վիրավորում և տեղափոխվել է Մեխակավանի զինհոսպիտալ, ինչը հանգեցրել է զինվորական ծառայությունը ժամանակավորապես դադարեցնելուն:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնում 19.05.2018թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 91252317 քրեական գործը: Գործով որոշում է կայացվել Ն.Առաքելյանի վերաբերյալ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա 16.06.2018թ-ին Նարեկ Վալերիկի Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի 4-րդ մասով և նույն օրը վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին:

14.09.2018թ-ին քրեական գործով որոշում է կայացվել համալիր դատահոգեբուժական-դատահոգեբանական ամբուլատոր փորձաքննություն նշանակելու մասին, որի կատարումը հանձնարարվել է ԱՀ ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի փորձագետներին:

Նկատի ունենալով, որ վերոնշյալ փորձաքննությունը կատարելու համար անհրաժեշտ են հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, իսկ փորձաքննությունների հանձնաժողովում նման մասնագետ չկա, ուստի փոձաքննության իրականացման նպատակով քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես փորձագետ ներգրավել «Էմպատիա» ՍՊԸ հոգեբան փորձագետ, 23 տարվա աշխատանքային ստաժ ունեցող հոգեբանական գիտությունների թեկնածու Անահիտ Լևոնի Լալայանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 85-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 91252318 քրեական գործով նշանակված համալիր դատահոգեբուժական-դատահոգեբանական ամբուլատոր փորձաքննության կատարման համար «Էմպատիա» ՍՊԸ հոգեբան փորձագետ, հոգեբանական գիտությունների թեկնածու Անահիտ Լևոնի Լալայանին ճանաչել որպես փորձագետ:

2. Ա.Լ.Լալայանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով սահմանված փորձագետի իրավունքներին ու պարտականություններին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածով սահմանված փորձագետի եզրակացության կազմման պահանջներին և նախազգուշացնել քրեական գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երկրորդ կայազորային
քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Վ.Նավասարդյան

Ծանոթացել եմ սույն որոշմանը
/ Լալայան Ա.Լ. /
«23» 10 2018թ.